ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.01.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/07

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ի ներկայացուցիչներ՝

Լ. Ղալակչյանի (լիազորագիր, տրված՝ 14.01.2020թ.)

Կ. Գաբրիելյանի (լիազորագիր, տրված՝ 14.01.2020թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.12.2019թ. թիվ 26/26-1/21366-2019 գրությամբ Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 20.12.2019թ. թիվ 07/19/12535-2019 գրության հիման վրա, 24.12.2019թ. թիվ 26/26-1/21366-2019 գրությամբ նախաձեռնել է Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ին

(հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ին ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Համաձայն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված 01.11.2019թ. «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6» ծածկագրով մրցույթի 11.11.2019թ N2 արձանագրության 3 կետի 6-րդ ենթակետի պահանջի՝ 1-ին չափաբաժնի հաղթող մասնակից ճանաչված Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ն սահմանված ժամկետում 13.11.2019թ ներկայացրել է մատակարարվելիք ապրանքի համարժեք տեխնիկական բնութագիրը:

Գնահատող հանձնաժողովի կողմից կազմված 15.11.2019թ N3 արձանագրությամբ և Գնումների գործընթացի կազմակերպման կարգի N526-Ն որոշման 41-րդ կետի պահանջի համապատասխան՝ Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ն առաջարկված 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային հասցեի միջոցով ներկայացրել է համարժեք տեխնիկական առաջարկը, այսինքն ժամկետի խախտման հետ կապված ուշացում չի արձանագրվել: Միաժամանակ պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ կետը, այն է արձանագրությունը կազմվել է 15.11.2019թ, բայց տեղեկագրում հրապարակել է 25.11.2019թ.:

18.11.2019թ. N4 արձանագրությամբ Պատվիրատուն մերժել է մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի համարժեք տեխնիկական առաջարկը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի և «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6» ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստի 25.11.2019թ N5 արձանագրության 1-ին կետի՝ 26.11.2019թ. տեղեկագրում Պատվիրատուի կողմից հրապարակել է 1-ին չափաբաժնի չկայացման հայտարարությունը:

05.12.2019թ. Պատվիրատուն էլ փոստի միջոցով Ա/Ձ-ից պահանջել է շտկում, դրա հիման վրա կազմվել է N5/1 արձանագրությունը, որի մասին տեղյակ չի պահվել մասնակցին, իսկ տեղեկագրում նույն արձանագրությունը հրապարակվել է 20.12.2019թ-ին, որը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջներին:

«ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6» ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստի 11.12.2019թ N6 արձանագրությունը, որը տեղեկագրում հրապարակվել է 19.12.2019թ. ևս չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջներին:

Ուստի Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ն, հաշվի առնելով Պատվիրատուի կողմից կատարված վերը նշված խախտումները, պահանջում է չեղյալ համարել Պատվիրատուի կողմից հայտարարված «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6» ծածկագրով մրցույթի 05.12.2019թ N5/1 և 11.12.2019թ. N6 արձանագրությունները:

Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/07 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.12.2019թ. թիվ 07/19/12535-2019 գրությամբ ներկայացրել է Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/07 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/07 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/07 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.11.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ն Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 12.11.2019թ. ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.11.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.12.2019թ. թիվ 26/26-1/21366-2019 գրությունը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 20.12.2019թ. թիվ 07/19/12535-2019 գրությունը և կից փաստաթղթերը, Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ

և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատաս-խանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև

առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել

անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.11.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ն Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 12.11.2019թ. ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխան հատկանիշներով չի համապատասխանում հրավերով սահմանված բնութագրի պայմաններին:

Նույն արձանագրության համաձայն՝ **հիմք ընունելով Կարգի 41-րդ կետը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկել անհամապատասխանութ-յունները:**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.11.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ սահմանված մեկ աշխատանքային օրյա ժամկետում Լալիկ

Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ի կողմից ներկայացվել է առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, որը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ **Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:**

Այսպիսով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը սահմանում է, որ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 42-րդ կետը սահմանում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ վերոհիշյալ կետերը սահմանում են մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելը ընթացակարգի մասնակցի հայտում անհամապատասխանություն հայտնաբերելու և շտկելու վերաբերյալ ծանուցելու, շտկելու համար ժամկետ տրամադրելու վերաբերյալ իրավակարգավորումները:

Մասնավորապես՝ վերոհիշյալ կետերը սահմանում են, որ մասնակցի հայտում անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում, մասնակցին տրվում է մեկ

աշխատանքային օր ժամկետ, որի ընթացքում անհամապատասխանությունը չշտկելու դեպքում՝ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար:

Քննարկվող գործի շրջանակներում արձանագրում եմ, որ Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.11.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակցի, ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Միևնույն ժամանակ Կարգի 47-րդ և 48-րդ կետերը կարգավորում են այն դեպքերը, երբ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով **<u>երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:</u>**

Մինչդեռ, արձանագրում եմ, որ Մասնակցին տրվել է Կարգի 41-րդ կետով նախատեսված մեկ աշխատանքային օր ժամկետ ապրանքի տեխնիկական բնութագրում անհամապատասխանությունը շտկելու համար, այն դեպքում, երբ պետք է կիրառվեր Կարգի 47-րդ կետը և տրամադրվեր 3 աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանությունները շտկելու համար: Ընդ որում, Մասնակցի հայտը մերժվել է հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մինչդեռ կիրառման ենթակա է Կարգի 48-րդ կետը:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հետագայում՝ 05.12.2019թ. Մասնակցին վերջինիս կողմից առաջարկված ապրանքի տեխնիկական

բնութագրում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ կրկին ծանուցելուն և շտկելու համար երեք աշխատանքային օր ժամկետ տրամադրելուն, ապա գտնում եմ, որ նշված գործողությունները չեն բխում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից, քանի որ դրանք իրականացվել են Մասնակցի հայտը մերժելուց և Ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի 25.11.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա չկայացած հայտարարելուց հետո:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ի կողմից «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, ուստի գտնում եմ, որ առկա չեն Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.12.2019թ. թիվ 26/26-1/21366-2019 գրությամբ Լալիկ Բոզոյան Գառնիկի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ